ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻԶԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ՀԱԻ

ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՎԱՌԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀՆՁԱՆՆԵՐԸ

Գինեգործությունը, խորն արմատներ ունենալով Հայկական լեռնաշխարհում, առավելագույն զարգացման է հասնում հատկապես միջնադարում: Խաղողի մշակման հարուստ ավանդույթներ ունեցող գավառներից է Արագածոտնը, ուր առկա են ինչպես աշխարհիկ, այնպես էլ եկեղեցական համայնքների տնօրինության ներքո գտնվող հնձաններ[1]*: Հայոց եկեղեցիները եւ վանքերը հսկայական տնտեսություններ տնօրինող հաստատություններ էին եւ ունեին իրենց սեփական հնձանային համալիրները՝ պայմանավորված եկեղեցու ծիսակարգում գինու մեծ կիրառությամբ: Միջնադարում խաղողից գինու ստացման ողջ գործընթացը կարծես սրբագործման արարողություն էր, քանզի համաձայն կտակարանային այլաբանությունների՝ Աստծո միածին որդին խաղողի ճշմարիտ որթն է, իսկ գինին՝ աստվածային արյուն: Արդար դատաստանի ժամին հոգիները դիտվում են որպես ողկույզներ, որոնք Աստծո կողմից ճզմվելու են աստվածային հնձանում*[2]*: Քրիստոսի օրինակով հնձանում ճզմվող խաղողների են նմանվում նաեւ մարտիրոսները, եւ պատահական չէ Ագաթանգեղոսի վկայությունն առ այն, որ Հռիփսիմյան կույսերը, Հռոմի Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից խուսափելով, գալիս են Հայաստան եւ ապաստան գտնում, հետո նաեւ նահատակվում Վաղարշապատի հնձաններում. «... եկեալ մտանէին ի հնձանայարկս արգեստանոյն, որ կան չինեալ ի հիւսիսոյ յարեւելից կուսէ. եւ կերակրէին ընչիւք իւրեանց*

---

[1] **Կ. Ղաֆադարյան,** Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, արձ. թ. 57, էջ 106-107:

[2] **Հ. Պետրոսյան,** Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երեւան, 2008, էջ 56:

ի վաճառաց քաղաքին»[3]*: Այնուհետեւ «Արդ՝ գտեալ լինէին նոքա ի հնձանս շինուածոցն»*[4]*:*

Ընդհանրապես, այգեգործական աշխատանքներով պայմանավորված եռուզեռը դիտվում էր որպես երկրի բարեկեցության ընորոշիչ: Այդ առումով ուշագրավ է, որ պատմիչ Արիստակես Լաստիվերցին երկրի ամայի, անտեր վիճակը նկարագրում է հետեւյալ կերպ. «Արքունական ապարանքն աւերակ եւ անմարդի: Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչացն: Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց, եւ ոչ բարեբանութիւն առ կոխոցս հնձանի»[5]*:*

Արագածոտնում հնձանային մշակույթի բարձր զարգացման մասին են վկայում նաեւ հնագիտական պեղումների արդյունքները: Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը 1987 թ. փրկարարական պեղումներ է իրականացրել Աշտարակ քաղաքի «Խոջաբաղեր» կոչվող վայրում: Պեղումները պարզեցին, որ ավերված երկու կառույցները հնձաններ են: Արշավախմբի կողմից առաջին համարակալված հնձանը, ըստ հնագիտական նյութերի, կառուցվել է վաղ միջնադարում: Այն հատակագծում հյուսիս-հարավ ուղղվածությամբ 11x10 մ չափերով քառանկյուն մի կառույց է[6]*: Հնձանի պատերի հաստությունը 1,5 մ է ու շարված է 1,5x1 մ չափերի հսկա ժայռաբեկորներով: Պատերը բարձրացված են անմիջապես ժայռի վրա, մուտքն արեւելքից է: Կառույցը 0,7x 0,5-0,8 մ չափերի պատով բաժանված է գործառութային տարբեր նշանակություն ունեցող երկու հատվածների՝ հյուսիսային մասը զբաղեցնում է կրաշաղախով պատված առագաստը, իսկ հարավային մասում տեղակայված է բնակելի-տնտեսական բաժինը: Քաղցուն անցել է եռաստիճան զտում՝ երեք տարբեր մեծության եւ տարողության տաքարների միջոցով: Առաջին տաքարը (խոր. 0,6 մ) տեղակայված է առագաստի հարավային պատի տակ, հաջորդը (խոր. 1 մ) բաժանարար պատի արեւելյան մասում է: Հնձանից քաղցուն դուրս է հոսել 8 մ երկարություն ունեցող կավե խողովակներով եւ վերջնական մաքրման ենթարկվել հնձանից 2,5 մ հեռավորության վրա գտնվող տաքարում (խոր. 3 մ) (նկ. 1): Քաղցուի նստվածքը հավաքվել է հորի հատակին արված տաշտանման փոսորակի մեջ: Բոլոր հորերը կրասվաղ են՝ անջրթափանց դարձնելու նպատակով:*

---

[3] «**Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց», Տփղիս,1909, էջ 85:

[4] Անդ, էջ 90:

[5] «Պատմութիւն **Արիստակեաց վարդապետի Լաստիվերտցւոյ**», Թիֆլիս, 1912, էջ 58:

[6] **Գ. Թումանյան,** Աշտարակի նորահայտ հնձանները, Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները), I, Երեւան, 1993, էջ 140-148:

Բնակելի-տնտեսական հատվածը կազմված է երկու օջախից, որոնցից քարերով կառուցվածը մտած է համեմատաբար վաղ թվագրվող թոնրի մեջ: Երկրորդ օջախից պահպանված է միայն թրծած կավե հիմքը[7]: Բնակելի հատվածի կենտրոնում են գտնվում կենդանիներին կապելու համար նախատեսված անցքերով քարերը (նկ. 2): Թոնիրը տեղակայված է արեւմտյան հատվածում (տր. 0,5 մ): Հնձանի ներսում պեղումներով բացվել են երկու հատակներ, որոնցից վերինը, հավանաբար, թվագրվում է ուշ միջնադարով, եւ կառուցվել է այն ժամանակ, երբ հնձանն այլեւս չի գործել: Ստորին հատակին են վերաբերում երկու օջախները եւ թոնիրը: Հատակի վրա բացվել են նաեւ 7-10 սմ տրամագծով գերանների մոխրացած մնացորդներ, որոնք հետազոտողներին հիմք են տալիս ենթադրելու, որ հնձանի ծածկը եղել է գերանակապ:

Վաղ եւ զարգացած միջնադարով են թվագրվում նաեւ Աշտարակ-Ապարան գործող ավտոխճուղուց աջ՝ «Մուղնու թառ» կոչվող վայրում պեղված հնձանները[8]: Ուշագրավ է, որ հնձանները կառուցված էին այգու այն հատվածներում, որոնք քիչ պիտանի էին մշակման համար: Առագաստի հատակը եւ մոտ 1 մ բարձրությամբ է, պատերը սվաղած են կրաշաղախով: Գետնափոր, կրասվաղ պատերով ու հատակով տաքարը տեղադրվել է առագաստի դիմաց: Այն շարված է մանր քարերով եւ ունի դեպի վեր նեղացող պատեր: Տաքարների տարողությունը հասնում է մինչեւ երեք տոննայի: Հնձանն ունի նաեւ բնակելի-տնտեսական հատված, որը հյուսիս-հարավ ուղղությամբ անցնող միջնորմով բաժանված է երկու հատվածների: Մուտքին կից՝ արեւմտյան մասում, կառուցված է կրասվաղ փոքրիկ ջրավազան, որին կից գտնվում են գրաստ կապելու համար նախատեսված անցքերով քարերը: Հավանական է, որ հնձանների մուտքերը փակվել են փայտե դռներով:

Միջնադարյան Հայաստանի խաղողագործության, եւ հատկապես գինեգործության մշակույթի բարձր դերի ու նշանակության մասին է վկայում սասանյան ժամանակաշրջանի հրեական «Բաբելոնյան գեմառա» կոչվող աշխատությունը[9], որում հետաքրքիր տեղեկություններ են պահ-

---

[7] **Գ. Թումանյան,** Հնձանային մշակույթը Հայաստանում, Երեւան, 2008, էջ 32:

[8] **Հ. Պետրոսյան, Ս. Հոբոսյան, Հ. Հակոբյան,** Աշտարակի միջնադարյան հնձանները (1987) ՀԽՍՀ-ում 1987-1988 թթ., Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երեւան, 1989, էջ 90-92:

[9] **Ю. А. Солодухо,** К вопросу об армяно-иранских торговых связях в IV в., Исследования по истории культуры народов Востока, Сборник в честь академика И. А. Орбели, Москва-Ленинград, 1960, с. 128-132.

Նկ. 1. Գինու վերջնական մաքրման հոր (Գ. Թումանյան, «Հնձանային մշակույթը Հայաստանում» գրքից)



Նկ. 2. Կենդանիներին կապելու համար նախատեսված անցքեր (Գ. Թումանյան, «Հնձանային մշակույթը Հայաստանում» գրքից)

Նկ. 3. Էջմիածնի մշակույթի տան մոտ բացված հնձանի մառանը («Գինին հայոց ավանդական մշակույթում» գրքից)

Նկ. 4. Եղվարդ. եկեղեցու հարեւանությամբ բացված հնձանահոր (նկարը տրամադրել է հնագետ, պ. գ. թ. Ն. Հակոբյանը)

Նկ. 5. Զվարթնոց. հնձանի մանրակերտ, Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան («Գինին հայոց ավանդական մշակույթում» գրքից)

Նկ. 6. Աղթամար. Ս. Խաչ եկեղեցու հարավային ճակատի հարթաքանդակը (И. А. Орбели, ”Избранные труды„ գրքից)

Նկ. 7. Դաշտադեմի ամրոցի հնձանահորերը



Նկ. 8 Դաշտադեմի հնձանների չափագրությունը (ճարտ. Տ. Բաղիշյան)

պանվել նաեւ գինու միջազգային շուկայում Վաղարշապատ քաղաքի խաղացած դերի մասին: Ըստ այդմ, Վաղարշապատ քաղաքը խոշոր հանգուցային կետ էր դեպի հարավ-արեւելք եւ հյուսիս-արեւմուտք գինու արտահանման գործում: Այստեղ նաեւ սահմանվում էին միջազգային շուկայի համար արտահանվող գինու գները:

Վաղմիջնադարյան հնձանի մնացորդներ պեղվել են Էջմիածին քաղաքի մշակույթի տան շրջակա տարածքում՝ միանավ բազիլիկ եկեղեցու հատակի տակ[10]: Այն շարված է փոքր չափի գլաքարերով եւ սվաղած կրաշաղախով: Պեղվել է նաեւ մառանային հատվածը՝ գինու կարասների շարքով, որոնց բերանները փակվել են շրջանաձեւ քարերով (նկ. 3): Հնձանի հյուսիս-հարավ առանցքով բացվել է 180 սմ երկարությամբ պահպանված մի պատ, որը, հավանաբար, պատկանել է տնտեսական նշանակության որեւէ կառույցի:

Հնձաններ պեղվել են նաեւ Էջմիածին քաղաքի արեւելյան ծայրամասում: 1979 թ. Ս. Հռիփսիմե եկեղեցու շրջակայքում հայտնաբերվել են միանավ բազիլիկ եկեղեցի, բնակարանի, տնտեսական, կենցաղային կառույցների մնացորդներ եւ բազմատեսակ հնագիտական նյութեր[11]: Այդ ամենի մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պարիսպներից դուրս, եկեղեցու հյուսիս-արեւելյան հատվածում բացված գինու մշակման հետ կապված կառույցները: Դրանք հատակագծում կլոր, լավ մշակած տուֆե սալերով երեսպատված, կրասվաղ պատերով երկու մեծ հորեր են, որոնցից յուրաքանչյուրն ունի 2 մ տրամագիծ եւ 2,1 մ խորություն: Հորերի հատակները նստվածքի համար ունեն փոսորակներ: Դրանք պատկանել են Ս. Հռիփսիմե եկեղեցուն եւ թվագրվում են Է. դարով:

Միջնադարյան Արագածոտնում հնձաններ են բացվել նաեւ Ս. Գայանե եկեղեցու շրջակայքում, որոնցից մեկը (հավանաբար խաղող տրորելու առագաստը) ավերված վիճակում պեղվել է Թ. Թորամանյանի կողմից, եւ ըստ նրա՝ քառակուսի կառույց էր[12]:

1976 թ. հնձանի մի հատված է բացվել Եղվարդում՝ բազիլիկ եկեղեցու հարեւանությամբ (պեղումները՝ պ. գ. թ. Ն. Հակոբյանի): Այն հատա-

---

[10] **Գ.Կարախանյան, Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Պ. Հարությունյան,** Հայաստանի վաղ միջնադարի նորահայտ հուշարձաններ, ԲԵՀ, 1992, թ. 2, էջ 158:

[11] **Р. Торосян,** Новонайденные памятники близ храма Рипсиме, Հայաստանի մշակույթի եւ արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանս, զեկ. թեզ. Երեւան-Սարդարապատ, 1979 թ., էջ 266-267:

[12] **Թ. Թորամանյան,** Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հ. 2, Երեւան, 1948, էջ 269:

կագծում գլանաձեւ, խորը կառույց է՝ շրջանակված շրջանաձեւ բերանով, երեսպատած լավ մշակած տուֆե սալերով (նկ. 4): Պատերը սվաղած էին կրով, հատակին պահպանված էր գինու զտման փոսորակը:

Միջնադարյան Հայաստանում գինու ստացման գործընթացի մասին հիանալի պատկերացում է տալիս Զվարթնոցի համակառույցի հարավարեւելյան կողմում տեղակայված վաղ միջնադարյան հնձանը, որը մասնակի բացվել էր դեռ 1930-ական թթ., իսկ ամբողջովին պեղվել է 1958 թ., Զվարթնոցում իրականացված մաքրման եւ բարեկարգման աշխատանքների ժամանակ (նկ. 5): Հնձանն ուղղանկյունաձեւ կառույց է (չափերը՝ 32,6 x 19 մ): Այն միջանցքով բաժանված է երկու հավասար հատվածների, որոնցից հարավայինում տեղակայված են չորս հարթակներ: Դրանք սալարկված են գետաքարերով եւ սվաղած կրաշաղախով, որոնցից եզրայինները համեմատաբար մեծ են (32 մ²) միջիններից (18,5 մ²): Խաղողահյութի կուտակման համար նախատեսված հորերը տեղակայված են եզրային հարթակներում: Հարթակները դեպի հորեր ունեն որոշակի թեքության առվակներ՝ հյութի հոսքը ապահովելու համար: Հորերը շրջանաձեւ են (տրամագիծը՝ 1,80-1,85 մ, խոր.՝ 1,65 մ)՝ շարված լավ մշակած տուֆով, սվաղած կրաշաղախով: Հորերի հատակներին արված են փոքր փոսորակներ՝ նստվածքների կուտակման համար: Հյուսիսային հատվածում տեղակայված են երեք հարթակներ (19-20 մ²), որոնցից արեւելք գտնվում են երեք քառակուսի հորեր (1,25x1,25; 1,8x1,14; 1,8x1,8): Ըստ Վ. Հարությունյանի՝ այս հատվածը կառուցվել է հարավայինից համեմատաբար ուշ՝ բերքի ծավալների աճի պատճառով[13]: Հորերը կառուցված են սրբատաշ տուֆով, պատերը կրասվաղ՝ հյութի ներծծումը կանխելու նպատակով: Հնձանի տանիքը, հավանաբար, եղել է փայտածածկ[14]:

Միջնադարյան հնձանի կառուցվածքի մասին որոշակի պատկերացում է տալիս Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու հարավային ճակատի հարթաքանդակը: Այն կարծես խաղողի բերքահավաքի տեսարանի շարունակությունը լինի: Հուշարձանի թվագրումից ելնելով՝ հնձանի քանդակը թվագրվում է Ժ. դարով, թեեւ պիտի կարծել, որ դրանք ժամանակի ընթացքում կառուցվածքային էական փոփոխություններ չեն կրել: Այստեղ ներկայացված է խաղողի ճզման ընթացքը երկու բոկոտն, կիսամերկ տղամարդկանց կողմից[15](նկ. 6): Պատկերաքանդակի մանրամասներից ելնելով՝ Հ.

---

[13] **Վ. Հարությունյան,** Զվարթնոցի պալատն ու հարակից շենքերը, ‹‹Տեղեկագիր››, 1962, թ. 12, էջ 57-60:

[14] Անդ, էջ 59-60:

[15] **И. А. Орбели,** Из истории культуры и искусства Армении X-XIII вв., Избранные труды,

Խալփախչյանը ենթադրում է, որ հնձանը եղել է ընդարձակ, քարաշեն, կամարակապ կառույց[16]*: Ս. Մնացականյանն այն համեմատում է ժողովրդական ճարտարապետության մեջ հայտնի սյունասրահների հետ, որոնք երկար ժամանակ դեռ պահպանվում էին Արարատյան դաշտի բնակավայրերում* [17]*:*

Ժ.-ԺԴ. դարերում եւս Արագածոտնը էական դեր ուներ գինու արտադրության գործում: Այդ մասին փաստում է Անբերդի եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի ներսի արձանագրությունը, որում, ի թիվս կարեւոր այլ հիշատակումների, տեղեկություններ են պահպանվել նաեւ տարբեր գավառներում զարգացած գյուղատնտեսության ճյուղերի եւ սահմանված հարկերի մասին: Այսպես, Նիգ գավառի համար որպես հարկ սահմանվում էր ցորենը, Արագածոտնի համար՝ գինին, իսկ Վաղարշապատի համար՝ բամբակը[18]*:*

Արագածոտնում բարեբեր այգիների ու հնձանների առկայության մասին են փաստում մի շարք վիմագրեր: Հառիճավանքի 1196 թ. արձանագրությունը Արուճում գտնվող այգու եւ հնձանի նվիրատվության մասին է[19]*: Արուճում եւ Փարպիում հնձանների վերանորոգության մասին է Հոռոմոսի վանքի 1258 թ. արձանագրությունը*[20]*:*

Բագնայրի Ս. Աստվածածին եկեղեցու ԺԳ. դ. երկու արձանագրությունների համաձայն՝ Աշնակում երկու հնձան եւ մեկ այգի է նվիրաբերվել եկեղեցուն[21]*: Այն, որ Աշնակը հարուստ է եղել հնձաններով, առարկայորեն փաստվեց նաեւ 1988 թ. բնակավայրի տարածքում կատարված պեղումներով, ինչի արդյունքում բացվեց վեց հնձան: Դրանցից երկուսը չորս բաժանմունքներ ունեցող կառույցներ են, որոնց սենյակներն ունեն կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ, իսկ պատերը շարված են տարբեր մեծության անմշակ քարերով: Խաղող ճզմելու համար նախատեսված բաժինների պատերը եւ հատակը պատված են կրաշաղախի հաստ շերտով: Խաղողի քաղցուի հավաքման համար սենյակներում արված են մեծ*

т. 1, Москва, 1968, с. 153-154.

[16] **Հ. Խալփախչյան,** Հայաստանի արտադրական կառույցները, Երեւան, 1961, էջ 18:

[17] **Ս. Մնացականյան,**Աղթամար, Երեւան, 1983, էջ 125:

[18] **Ս. Հարությունյան,** Անբերդ, Երեւան, 1978, էջ 55:

[19] **Կ. Կոստանեանց,** Վիմական Տարեգիր, Ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, Ս.Պետերբուրգ, 1913, էջ 39, 1196/a:

[20] Անդ, էջ 101, 1258/d:

[21] Անդ, էջ 104, 1262/a, էջ 146, 1231:

հորեր: Հայտնաբերված հնագիտական նյութի հիման վրա հնձանները թվագրվում են ԺԲ.-ԺԴ. դդ.[22]:

Հետաքրքրական է, որ Հովհաննավանքի Կաթողիկե եկեղեցու գավթի արձանագրությունը հնձան կառուցելու մասին[23] հաստատվեց 2015 թ. պեղումների արդյունքում[24]: Հնձանահորերը չորսն են՝ հայտնաբերված բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատի մոտ: Դրանք կառուցված են անմշակ քարերով, ծեփված կրասվաղով: Հորերից մեկի բերանը ծածկված է եղել անմշակ սալաքարով: Հովհաննավանքում հայտնաբերված հնձանները թվագրվում են ԺԳ. դարով[25]:

Ուշագրավ է Դաշտադեմ ամրոցի միջնաբերդի պատին Զաքարյանների տոհմից Աղպուղայի արձանագրությունը գինու հարկը հանելու մասին[26]: Ուստի պատահական չէ հնձանների հայտնաբերումը նաեւ Դաշտադեմ ամրոցի պեղումների ժամանակ (նկ. 7)[27]: Երկու հնձանահորերը հայտնաբերվել են ամրոցի արեւմտյան պարսպապատին կից, որոնք պայմանականորեն համարակալվել են (1 եւ 2): Դրանցից առաջինը 1.17x1.53x1.30 մ չափերով, ոչ հստակ ուղղանկյուն կառույց է, երկրորդը եւս ունի նմանօրինակ կառուցվածք, բայց փոքր-ինչ տարբեր չափերով՝ 1.12x1.40x1.10 մ (նկ. 8): Հատակներին պահպանվել են գինու նստվածքի համար նախատեսված փոսիկները: Երկրորդ հորի մեջ բացվել են ուշ շրջանում ներկառուցված թոնիրներ: Հնձանահորերը հպված են իրար՝ եզրային հատվածում շարված ոչ մեծ, անմշակ քարերով: Հորերի պատերը կրասվաղված են մինչեւ հինգ շերտով, ինչը փաստում է բազմաթիվ վերանորոգումների մասին[28]: Հնձանների առագաստները առայժմ տեսանելի չեն, սակայն չի բացառվում, որ հայտնաբերվեն հարեւանությամբ գտնվող սալահատակի տակ:

---

[22] **Е. Асатрян,** Закари берд (результаты раскопок), “ Археологические раскопки в Армении”, N 19, Ереван, 2005, с. 103-107.

[23] **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., արձ. թ. 57, էջ 106-107:

[24] **Ա. Ժամկոչյան, Ն. Հակոբյան,** Հովհաննավանքի արեւմտյան պարսպապատի պեղումների արդյունքները, ‹‹Էջմիածին››, 2016, Բ., էջ 120-121:

[25] Անդ, էջ 121:

[26] **Հ. Շահխաթունեաց,** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 53:

[27] **Ե. Ասատրյան,** Դաշտադեմ ամրոցի 1989-1990 թթ. պեղումների արդյունքները, ՀՀ-ում 1989-1990 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Երեւան, 1991, էջ 114:

[28] **Տ. Ալեքսանյան, Դ. Միրիջանյան,** Դաշտադեմի 2011 թ. պեղումները (նախնական հաղորդում), ‹‹Էջմիածին›› 2012, Ը., էջ 103-104:

Արագածոտն գավառում պեղումներով վավերացված միջնադարյան հնձանները եւ դրանց ուսումնասիրությունները հնարավոր են դարձնում խոսելու միջնադարյան Արագածոտնում խաղողագործության, եւ մասնավորապես գինեգործության զարգացվածության մասին: Միջնադարյան Հայաստանի գինեգործության մեջ ունեցած դերի եւ ստացվող գինու ծավալների մասին վկայող վիմագրական տվյալները հաստատվում են նաեւ հնագիտական նյութերով՝ ամբողջացնելով միջնադարյան Արագածոտնում հնձանային մշակույթի համայնապատկերը եւ դրանց կարեւորությունը Հայաստանի գինեգործության պատմությունն ուսումնասիրելու գործում:

РЕЗЮМЕ

Виноделие, имея глубокие корни на Армянском нагорье, достигает наибольшего развития в эпоху средневековья. Одним из регионов, имеющих богатые традиции культивации винограда, является Арагацотн, где расположены винодавильни, принадлежащие как гражданским, так и церковным общинам. Армянские церкви и монастыри были учреждениями, руководящими обширными хозяйствами и имели свои собственные винодавильни, что было обусловлено широким употреблением вина в церковных церемониях. О высоком уровне развития винодавильной культуры в Арагацотне свидетельствуют эпиграфические данные и результаты археологических исследований. В статье представлены средневековые винодавильни исторической провинции Арагацотн, их структура, производство вина и подробности, касающиеся виноделия, исследования которых выявляют важные сведения о развитии и масштабах виноделия в средневековой Армении, его роли во внутренней и внешней торговле.

SUMMARY

Having deep roots in the Armenian Highland, winemaking reached its ultimate development in the Middle Ages. One of the provinces that obtained those levels in the traditions of wine cultivation is Aragatsotn, where the winepresses were located under the supervision of both civic and church communities. The Armenian churches and monasteries supervised large households and had their own winepress complexes that were conditioned by the widespread use of wine in church ceremonies. Epigraphic sources and archaeological researches attest to the high development level of the winepress culture in Aragatsotn. This article presents medieval winepresses of Aragatsotn, their structure and details concerning winemaking. The studies reveal important data about the development, scale of wine production in Medieval Armenia and its role in internal and foreign trade.